

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ <u>1371</u>
22 APR 2022
Կից <input type="checkbox"/> Նշում _____

« 21 » ապրիլ 2022թ. No 1663 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՕԿԻ Հ/Ձ ՍՊԸ, ՆՈՐ-ԽԱՐԲԵՐԴ,
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԴԵՂԻ
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՆՕԿԻ Հ/Ձ ՍՊԸ, ՆՈՐ-ԽԱՐԲԵՐԴ,
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) «ԿԱՐԴԻՈ-ԱՍ
ԱՑԵՏԻԼՍԱԼԻՑԻԼԱԹԹՈՒ ԴԵՂԱՀԱՏԵՐ 100ՄԳ; (20/2X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՈՒՄԸ
ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ կետը,
«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի 3-րդ ենթակետը,
Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի
28-ի N 162-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ
Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական
կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 30.03.2022 թվականի N 0103037822
բացասական եզրակացությունը՝ Հայաստանի Հանրապետության ՆՕԿԻ Հ/Ձ
ՍՊԸ, Նոր-խարբերդ, Արարատի մարզ դեղագործական ընկերության
արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ ՆՕԿԻ Հ/Ձ ՍՊԸ,
Նոր-խարբերդ, Արարատի մարզ Հայաստանի Հանրապետություն) «Կարդիո-ԱՍ
ացետիլսալիցիլաթթու դեղահատեր 100մգ; (20/2x10/) բլիստերում» դեղի
անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ
փորձագիտական թիվ 20598 առ 30.03.2022թ. բացասական եզրակացությունը,
առ այն, որ լիարժեք փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ
փաստաթղթերը չեն ներկայացվել, արտադրությունը չի համապատասխանում
«Պատշաճ արտադրության գործունեության» կանոններին.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Տեսե՛ք. 22.04.22 Վ. ԽՕ՝Պ.

1. Մերժել Հայաստանի Հանրապետության ՆՕԿԻ Հ/Ձ ՍՊԸ, Նոր-Խարբերդ, Արարատի մարզ դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ ՆՕԿԻ Հ/Ձ ՍՊԸ, Նոր-Խարբերդ, Արարատի մարզ Հայաստանի Հանրապետություն) «Կարդիո-ԱՍ ացետիլսալիցիլաթթու դեղահատեր 100մգ; (20/2x10/) բլիստերում» դեղի վերագրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետի պարտականությունները կատարող Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ԱՆ 2022 թվականի ապրիլի 20-ի 1617 - Ա հրամանը:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

21.04.2022

X 

ԱՆԱՅԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Վերագրանցումը մերժված դեղերի ցանկ

Կ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	Երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	Երկիր	Բաց թողնված պատճառը	Եզրակացության համար և ամսաթիվ
1.	Կարդիո-ԱՍ	ացետիլսալիցիլաթու	դեղահատեր	100մգ; (20/2x10/) բլիստերում	ՆՕԿԻ Հ/Ձ ՍՊԸ, Նոր-Խարբերո, Արարատի մարզ	Հայաստանի Հանրապետություն	ՆՕԿԻ Հ/Ձ ՍՊԸ, Նոր-Խարբերո, Արարատի մարզ	Հայաստանի Հանրապետություն	Դ	20598 30.03.2022